ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/110

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13306-18 գրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.07.2018թ. թիվ ԱԹ/06.3/9708-18 գրության հիման վրա, 20.07.2018թ. «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ առողջապահության նախարարությունը 19.07.2018թ. թիվ ԱԹ/06.3/9708-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ «Դյուրակիր համակարգիչներ» ձեռքբերելու նպատակով իրականացվել է ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում հայտ է ներկայացրել նաև «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն: Հայտում առկա փաստաթղթերը ստորագրվել են ոչ թե տնօրենի կողմից, այլ վերջինիս կողմից ոչ լիազորված անձի կողմից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները, մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սակայն վերջինս սահմանված վերջնաժամկետի ավարտին չի ներկայացրել փաստաթղթերը ստորագրելու մասին լիազորագիրը, որի հիման վրա ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2018թ. թիվ 3 արձանագրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ առողջապահության նախարարության կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Մնացականյանը և Լուիզա Սարգսյանը:

3. <u>«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն 09.08.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ առողջապահության նախարարությունը իր կարիքների համար՝ «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գրիգորյանը 2018թ. հուլիսի 9-ից 14-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Այնուամենայնիվ, տվյալ Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2018թ. հուլիսի 9-ին մասնակցության հայտ է ստորագրել և ներկայացրել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) աշխատակից Դավիդ Դավթյանը՝ ընդ որում, առանց համապատասխան լիազորագիր ունենալու և Ընկերության տնօրենի համաձայնության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի, «Լանս» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, մասնավորապես «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի մասով՝ ներկայացված հայտում բացակայում էր հայտի փաստաթղթերը ստորագրելու իրավունքի լիազորագիրը:

Նույն կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշել է «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին, «Լանս» ՍՊԸ-ին և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված վերջնաժամկետի ավարտին շտկումներ իրականացվել են միայն «Լանս» ՍՊԸ և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի:

Գնահատող հանձնաժողովը որոշել է մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, իսկ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված համապատասխան գրությամբ ՀՀ առողջապահության նախարարը հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ «Դյուրակիր համակարգիչներ» ձեռքբերելու նպատակով իրականացվել է ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում հայտ է ներկայացրել նաև «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն: Հայտում առկա փաստաթղթերը ստորագրվել են ոչ թե տնօրենի կողմից, այլ վերջինիս կողմից ոչ լիազորված անձի կողմից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի

պահանջները, մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սակայն վերջինս սահմանված վերջնաժամկետի ավարտին չի ներկայացրել փաստաթղթերը ստորագրելու մասին լիազորագիրը, որի հիման վրա ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ. հուլիսի 13-ի թիվ 3 արձանագրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

2018թ. հուլիսի 16-ին «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գրիգորյանի կողմից Ընկերության աշխատակից Դ.Դավթյանին ներկայացվել է հետևյալ բովանդակությամբ գրություն. «Տեղեկացնում ենք, որ Դուք ոչ պատշաճ եք իրականացրել Ձեր աշխատանքային պարտականությունները, մասնավորապես՝ սույն թվականի հուլիսի 9-ին ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի համաձայն Գնորդին գնային առաջարկ եք ներկայացրել՝ առանց տնօրենի համաձայնության և թույլտվության: Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով, խնդրում ենք տալ բացատրություն Ձեզ վերապահված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ: Պատճառների մասին Ձեր գրավոր բացատրությունը ակնկալում ենք ստանալ սույն գրությունը ստանալու օրվանից հաշված՝ 3 օրվա ընթացքում: Տեղեկացնում ենք, որ նշված ժամկետում, առանց հարգելի պատճառների, բացատրություն չներկայացնելու դեպքում կարգապահական տույժ կկիրառվի առանց բացատրության»:

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գրիգորյանը 24.07.2018թ. թիվ Ա-121-07 հրամանով Ընկերության աշխատակից Դ.Դավթյանին հայտարարել է նկատողություն՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության կառավարման միանձնյա մարմնի կազմում կարող են ընտրվել նաև ընկերությանը չմասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի անունից «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում ներկայացված մասնակցության հայտը ստորագրվել է Ընկերության աշխատակցի կողմից, ով իրեն իրավունք է վերապահել Ընկերության տնօրենի երկրում չգտնվելու պարագայում՝ առանց Ընկերության տնօրենի համաձայնության և առանց համապատասխան լիազորագիր ստանալու՝ որոշելու տվյալ Ընթացակարգին Ընկերության մասնակցության հարցը և իր անունից էլեկտրոնային եղանակով ստորագրելու նշված Ընթացակարգի մասնակցության հայտը: Մինչդեռ, ինչպես նշվել է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ ՍՊԸ-ի ընթացիկ ղեկավարումը, այդ թվում նաև գնման ընթացակարգերին մասնակցելու որոշումը կայացվում է ընկերության ղեկավարի (տվյալ դեպքում տնօրենի) կողմից, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Իրականում Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանը ս.թ. հուլիսի 9-ից 14-ը բացակայել է ՀՀ-ից և տեղյակ չի եղել Ընկերության աշխատակցի կողմից կազմված հայտի և այն ներկայացնելու մասին, որի արդյունքում 2018թ. հուլիսի 24-ի թիվ Ա 121-07 հրամանի համաձայն՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի աշխատակից Դ.Դավթյանին տրվել է նկատողություն:

Հենց այդ իսկ պատճառով «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գրիգորյանը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը չի ներկայացրել փաստաթղթերը ստորագրելու մասին Դ.Դավթյանին տրված լիազորագիրը՝ նման լիազորագրությունը վերջինիս ընդհանրապես վերապահված չլինելու պատճառով:

Տվյալ իրավիճակում մենք գործ ունենք ոչ թե «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, այլ ոմն քաղաքացի Դավիդ Դավթյանի կողմից լրացված և ներկայացված թղթերի հետ, որոնք չեն կարող համարվել Ընկերության կողմից ներկայացված հայտ, և առավել ևս նման պայմաններում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն չէր կրում պարտավորություն շտկելու ներկայացված փաստաթղթերը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 19.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50 որոշմամբ արձանագրվել է, որ հայտը ստորագրելու և ներկայացնելու իրավունք վերապահող ոչ պատշաճ լիազորագիրը հիմք է հայտը մերժելու համար՝ արձանագրելով, որ բողոքարկվող ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 19.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/50 որոշման տրամաբանությունից՝ ստացվում է, որ ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պետք է, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ եթանկետի պահանջներով, մերժեր ներկայացված հայտը, այլ ոչ թե Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Իսկ նման պայմաններում ընդհանրապես չէր առաջանա «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված մասնակիցն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վտանգ՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքով:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/110 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2018թ. թիվ 03/26-3/13306-18 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 19.07.2018թ. թիվ ԱԹ/06.3/9708-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 13.07.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի 09.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար՝ դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 13.07.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի փսատաթղթերը ստորագրելու իրավունքի լիազորագիրը և որոշել է Ընկերությանն առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը Ընկերության կողմից չի շտկվել:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանը 2018թ. հուլիսի

9-ից 14-ը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից: Այնուամենայնիվ, «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. մասնակցության հայտ է ներկայացվել: Ընկերության աշխատակից Դավիդ Դավթյանն իրեն իրավունք է վերապահել առանց Ընկերության տնօրենի համաձայնության և առանց համապատասխան լիազորագիր ստանալու՝ ստորագրել ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի մասնակցության հայտը: Ընկերությունը հայտնել է նաև, որ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր ներկայացված հայտը, այլ ոչ թե առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, քանի որ հայտը ստորագրելու և ներկայացնելու իրավունք վերապահող ոչ պատշաճ լիազորագիրը հիմք է հայտը մերժելու համար:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք լիազորագիրը հայտով ներկայացվող շտկման ենթակա փաստաթուղթ է, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ լիազորագիրը համարել են որպես հայտով ներկայացվող փաստաթուղթ և այդ իսկ պատճառով առաջարկել են Ընկերությանը շտկել այն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 30-րդ հոդվածի՝ 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1)հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

• 30-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 321-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

• 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

• «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել, որում առկա փաստաթղթերը ստորագրվել են ոչ թե տնօրենի կողմից, այլ Ընկերության աշխատակցի կողմից, թեև վերջինս տրված չի եղել համապատասխան լիազորագիր:

• ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/34 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի փսատաթղթերը ստորագրելու իրավունքի լիազորագիրը և որոշել է Ընկերությանն առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ հայտով ներկայացվող փաստաթղթեր են՝ հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր) եթե հրավերով նախատեսված է և հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Բողոքներ քննող անձը գտնում է, որ լիազորագիրը հայտով ներկայացվող փաստատուղթ չէ և ենթակա չէ շտկման:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ գնահատող հանձնաժողովը «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժեր, այլ ոչ թե առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13306-18 գրությամբ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ